

Թող զի խառնութիւն ըստ ուղիղ մտաց,  
 Ի միաւորիչ անշիտիմ իրաց,  
 զԱստուածարանին յիշեան զասացուած,  
 Քանին և մարմնոյն ըզ նոր խառնուած.  
 Ըզ մկրտութիւնն յաշխարհականաց,  
 Չասեմք թէ չէ իսկ ՚ի լինիլ հարկաց.  
 Չօծումն իւղով ծանր հիւանդաց,  
 Ընդունիմք մի գոլ խորհրդոց յեթմանց,  
 Սիր առնուլ զձէթ իբրև ծէս ազգաց,  
 Ի վաղուց ՚ի մեզ մնայ խափանած.  
 Եւ զ վասն հիւանդաց մաղթանք երիցանց,  
 Գիշէր Ժ՝ կոչմամբ ունիմք անմոռաց,  
 Լուացումն ջուրը մեկնելոց յաստեաց,  
 Վասն զգուշութեանն լինին կենդանեաց,  
 Չի հոտ մտհարեր ախտից կամ փխրաց,  
 Մի՛ տայցեն վնաս յորդոց ընտանեաց,  
 Սա չէ ՚ի մեզ նոր ՚ի ծխից տաճկաց,  
 Չի լինէր ՚ի գիրս հետք յիշատակաց,  
 Խաչեցար ասել յերս սրբասաց,  
 Էին սովորութիւն ամենայն ազանց,  
 Ի զէմն Արդւոյ այս բան մաղթանաց,  
 Յայտնի վկայեն որք չունին նախանձ,  
 Թափիչն Պատրոս գայլն գիշխանձ,  
 Անձանցթ է մեզ և մեր սուրբ հարանց,  
 Մտնաղ անուանեալ ուտեստ ալքատաց,  
 Ոչ է հրեարէն ՚ի հին օրինաց,  
 Քաջ ՚ի Շնորհալոյնն ուսիր գրութեանց,  
 Եւ մի՛ միւսանդամ լինիլ զըսասաց,  
 Վատել զճրագ՝ յօրն նաւակատեաց,  
 Է ՚ի Սաղմեան արարողութեանց,  
 Չի վատին յայնժամ՝ հոգի մոռնողինաց,  
 Ի մի ճրագէ՛ Քրիստոսի Շիրմաց,  
 Երկրպարութիւն խուռն ուխտաւորաց,  
 Ոչ է ճրագին, այլ գերեղեանաց,  
 Չոր բացածանոց արքունի մեծաց,  
 Կրութիւն ազգիս ՚ի դատին Յունաց,  
 Տալ զմարմնաւորս ընդ հոգեորաց,

Է ողորմութիւն, չէ՛ դին շնորհաց,  
 Գննէ Պօղոսի լուր յորդոսանաց,  
 Լուեցո՛ զլեզուդ ՚ի բանասանաց,  
 Չի ընդ հոգեւոր մերոց սիրմանեաց,  
 Մեծ ի՞նչ է ասէ հունձք մարմնաւորաց,  
 Չի թէ՛ ոչ այսպէս տուրք ստարարաց,  
 Սակ ինչ համարեր անգին պարզեաց,  
 Արդ եթէ իցէ ակն հոգւոյդ բաց,  
 Տեսցես բաղմամբ յազգիս իրազաց,  
 Որք թէ արուսթնոց տեղեակ դիտութեանց,  
 Թէ աստուածայնոց վարդապետութեանց,  
 Քաջ դիտեն զոր մն սահմանք ՚ի նախնեաց,  
 Եւ զոր նորամուտ յետ ժամանակաց,  
 Հաստ խորհրդոց որ քստ հրամանաց,  
 Եւ որ միջոցիւ առիթ փրկութեանց,  
 Ըզ պակասութիւն մասնաւոր անձանց,  
 Ազգին վերածել չէ բարեմուտաց,  
 Որ՝ ազգի անհատ, ասո՛ն աննախանձ,  
 Չերժ գտանիցի ՚ի պակասութեանց,  
 Պապեն արձակեն զմեղուցեարն անդարձ,  
 Ըստ չափոյ խուղմանց մարդկեղէն չարեաց,  
 Չայնիւ նուազել զերգ շարականաց,  
 Մեղ աւանդեցին հարք աստուածազոբաց,  
 Եթէ մե՞ղ ինչ է՛ արդ արա՛ համայնց,  
 Չի մի՛ որ երգովք օրհնեացէ զաստուած,  
 Արդ ծանուցից քեզ և քո նմանեաց,  
 Չի զրջու և մեր լինիմք զինազոբեաց,  
 Ել մեզ ականական որպէս քաջ արանց,  
 Քեզ և մեզ բաւ է զէն բանից սուրբ հարց,  
 Տես գառհաւատչեայն յայս զոյն զրուած,  
 Գտանիցի՞ն հետք բանից լուտանաց,  
 Իրազեկ եղեալ մեր ախորժակաց,  
 Այնպէս փութացին լինիլ զիմանկաց,  
 Տեսի ՚ի գրիդ բան զըսարտութեանց,  
 Յայտնի նշանակ պարսաւադիտաց,  
 Ես զայն ճանապարհ կալայ և կալայց,  
 Արպէս վայելէ՛ ճշմարտասիրաց.

Ի ՏՕՆԻ ՍՐՔԱՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ

• Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի •

Գիտեմ՝ քաղցր է Ձեզ յեղիղել ճառ ներբողեան յայտ՝ աւուր,  
 Ըզ Վարդանանց սուրբ յիշատակ տօնել երգօք քաղցրալուր.  
 Գիտեմ՝ խայտան յեռանդն հոգւոյ աղղասեր սիրտք Ձեր քնքուշ -  
 Երբ յԱւարսցր սլացեալ մտօք քաջացն զգործս ամէք յուշ:

Վարդ անժառամ մեծն Վարդան՝ ո՛հ պատճառոյս խամրի սիրտ,  
 Ի յիշկն իմ զԱնունն անմահ՝ սիրոյ սրտիս շարժառիթ.  
 Քաջն Վարդան սուրբ նահատակ երգոյս է շունչ և հոգի,  
 Որ զիւր զկեանս մատոյց ի զո՛հ բողբանուէր վասն ազգի.  
 Թէպէտ գրիս է ծանրասահ և մատուցես քն զողորմուն,  
 Բայց զխոյնիան երգել զքաջն յիշձ պաշարիմ՝ ակաղձուն.  
 զՀոմերոսեան արգեօք հանձար պարտ էր ունել յերգել Ձեզ,  
 Որ դուռառեօք անմահացոյց զարին արանց զԱբիլէս:  
 Զկորովին ասեմ Վարդան համանձան վե՛հ Հայկայ,  
 Որ 'ի խաչին 'ի զրօշակ խմբեալ զազգ մեր փոքրամանեայ.  
 Յառաջ մատեաւ և անվեհեր մուտ գոռ մարտին յասպարէզ,  
 Արհամարհեալ զփառս, զկեանս, եղ զինքն յաղէտրս պէսպէս,  
 Միտնգամայն խաչիւ զրօշմեալ զիւր և զիւրոցն բզձակատ,  
 Եւ 'ի սիրտն հանգոյն կեքեալ զուխտ հաւատոյն ըզհատատ,  
 Արիստիրտ ընդդէմ՝ եկաց թիւր աղանդոյն՝ պարսկախան,  
 Արդել ըզ ձեռսն պիղծ մխել 'ի սուրբ հաւատն Քրիստոսեան:  
 Թէպէտ Արտազ և Աւարայր ընդ այնր արեամբ ներկեցան,  
 Թէպէտ հազար և երեսուն և վեց վկայք կընքեցան,  
 Եւ Առաջնորդ նոցա ինքնին թէպէտ անկաւ 'ի մարտին,  
 Բայց բարձրացոյց արեամբ զփառս Եկեղեցւոյ զպանծաղին:  
 Որդիք Հակայ, ո՛ւմ ըզՎարդան հաւասարել կարացից,  
 Եւ ազգասեր Հոգոյ նորին իցե՛ն հոգիք զուգակից.  
 Մի միայն զտիսն տեսանեմք 'ի մեծն Յուդայ Մակարէ,  
 Որ զերթ Վարդան զոհեաց զանձն իւր և օրհնեցաւ յիւրն ազգէ:  
 Առիւծն Հայ Մամիկոնեան սքարազուխ հաւատոյ,  
 Գեր 'ի վերոյ զիտեր վառել 'ի սիրտ զօրացն զՃահն սիրոյ,  
 Հայ էր ազգաւ և Հայ սրտիւ՝ Հայրենասէր սրտեանդ,  
 Որովք զինեալ 'ի ձակատուն շահատակեր անվկանդ,  
 ներկեաց Վարդան զպաշտն Արտազու թաորաղեղ և օրր արեամբ.  
 Արեամբ, որով ծաղկունք զաշտին վարդաբարմիր ներկեցան.  
 Եւ հոտ զանոջ ինեղոցն 'ի բոյրս Եկեղեցւոյն խառնեցին,  
 Ի հաւատոյ սեղան 'ի սիրտս բուրեալ որդոց փոքր հօտին:  
 Եւ Քարոզեաց քաջն Վարդան ո՛չ լոկ բանիւ քաջութիւն,  
 Այլ զիւրովսանն վրեմական զործոյն եցոյց մեզ զարդիւն,  
 Զի որք զանուն ցանկան կրել զայուլթեանն հարազատ,  
 Պարտ է նոցա հեղուլ զարիւն 'ի պահպանել ըզհաւատ:  
 Թէպէտ Տիգրանք և Արտաշէպ՝ Արքայք Հայոց պանծայի,  
 Տարածեցին զհամբաւ ուժոյ և քաջութեան Հայ բաղկի,  
 Բայց քաջն Վարդան զհոգեոր ուժոյն կմող զօրինակ,  
 զԵկեղեցւոյ՝ և զԱզգութեան պանծացուցեալ յաղթանակ:  
 Աւտի 'ի ճահ է մեզ այսօր Հանդիսականք ազգասեր,  
 Գորովալիս սիրով երգել ըզգօրծ քաջին անվեհեր,  
 Եկեղեցւոյ լինել վասն ոյր մշտաբարբառ օրհնարան,  
 Եւ յառանին կենցաղս ունիլ յաւետ զօգի Վարդանեան: